

Փիլոնի փիլիսոփայական այլաբանական մեկնութեան «կրկնակի իմաստի եղանակը» (բառացի եւ այլաբանական իմաստ) հետագային մեծ ազդեցութիւն պիտի ունենար, մասնաւոր չին Դարու (Antiquity) վերջաւորութեան (4-րդ դարուն) եւ Քրիստոնեայ Միջնադարու (Middle Ages) ընթացքին:

Այս իմաստով յիշատակելի է նաեւ «քառապատիկ իմաստի եղանակը»:

Եւրոպայի մէջ, վանական **Յովհաննէս Կասիանոս** (Johannes Cassianus, 360 – 430 թ.), հետեւելով Պողոս Առաքեալի «Հաւատք-Սէր-Յոյս» եռեակին, կը կազմէ «քառապատիկ իմաստի եղանակը», բառացի գրական իմաստին վրայ աւելցնելով 3 այլաբանական իմաստներ եւս, հետեւեալ ձեւով.-

- *Բառացի-գրական իմաստ* (Literal Sense),
- *Այլաբանական-վարդապետական իմաստ* (Allegorical-Dogmatical Sense), որ առնչուած է հաւատքին,
- *Այլաբանական-բարոյական իմաստ* (Tropological-Moral Sense), որ առնչուած է սիրոյ եւ
- *Այլաբանական-վախճանաբանական իմաստ* (Anagogical-Eschatological Sense), որ առնչուած է յոյսին:

Հեղինակը իր միտքը կը պարզաբանէ Երուսաղէմի հետեւեալ օրինակով.-

- Երուսաղէմ, բառացի-գրական իմաստով «պատմական քաղաք» մըն է՝ Միջին Արեւելքի մէջ,
- Երուսաղէմ, այլաբանական-վարդապետական իմաստով կը բացայայտէ՝ «Քրիստոսի Եկեղեցին»,
- Երուսաղէմ, այլաբանական-բարոյական իմաստով կը բացայայտէ՝ «մարդկային հոգին» եւ
- Երուսաղէմ, այլաբանական-վախճանաբանական իմաստով կը բացայայտէ՝ «Աստուծոյ երկնային քաղաքը»:

Նոր Դարու (New Age) սկիզբը, Բողոքական Եկեղեցւոյ հիմնադիր **Մարտին Լութերի** (Martin Luther, 1483 – 1546 թ.) եւ այլ բարեկարգիչներու կողմէ խստիւ կը քննադատուի ու կ'արժեգրուի «քառապատիկ իմաստի եղանակը», իսկ Կաթոլիկ Եկեղեցւոյ կրօնագիտութեան (Catechism) մէջ, ան կը կրէ որոշ փոփոխութիւններ:

ՓԻԼՈՆԻ ԱՍՏՈՒԱԾԻՄԱՍՏՈՒԹԻՒՆԸ

Փիլոն, կը զանազանէ եւ նոյնիսկ ամբողջովին կը բաժնէ՝ *մտացածին հոգեւոր աշխարհը* (յուն.՝ *kósmos noêtos*), *զգայական երեւութական աշխարհէն* (յուն.՝ *kósmos aisthêtós*):

Փիլոնի յիշեալ երկու աշխարհներու բաժանումը այնքան խիստ է, որ Աբ. Գիրքի Հնգամատեանին մէջ ներկայացուած Աստուծոյ երեւոյթը անկարելի կը թուի, որովհետեւ նմանը իր նմանով կարելի է ճանչնալ (գրաբար ասոյթով՝ «նման զնմանն ճանաչէ»), ուրեմն Փիլոնի համաձայն՝ Աստուծոյ ճանաչումը,